

կ'ըլլաք ու ձեր արուեստին մէջ զիւրաւ
կը յաջողիք :

Ա. ԹԵՒՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բնութագիր Ս. Ն. Բ. :

Բնութագիր Ս. Ն. Բ. ի յղթա մեծանուն բը-
նագէտը ծնաւ Խոսիւայի Բոմոյ քա-
ղաքը՝ իշխանագուն ցեղէ 1745^{ին} : Սի-
տուծեանց սկզբունքը իր քաղքին դըպ-
րոյներուն մէջ սորվեցաւ , և այնչափ
օգուտ քաղեց անոնցմէ որ պատանե-
կուծեան ատենէն սկսաւ Եղեղին ,
Պէքքարիային , Սփալանցանիին և ու-
րիշ երևելի գիտուններուն հետ թըղ-
թակցութիւն ընել բնաբանութեան
բարակ նիւթերու վրայ , ու ինքն ալ
շատ նոր նոր գիւտեր ու գործիքներ
հնարեց , մանաւանդ ելեքտրականու-
ծեան մէջ : Իրեն գլխաւոր կարծիքնե-
րուն մէկն ալ աս էր՝ թէ փոթորիկնե-
րուն ու կայծակներուն առջևն առնե-
լու համար շատ օգտակար հնարք կ'ե-
րենայ բարձր տեղուանք կրակ վառելը :
Եւ կարծիքը ան ատենի բնագէտները
մեծ բանի տեղ չդրին . բայց վերջի տա-
րիներս Երազմոյ և Ս. Բ. թէթէուչի բնա-
գէտները փորձով նոյն կարծիքը հաս-
տատեցին . որովհետեւ կը տեսնեն որ
ածուխ կամ կիր շինելու գործարաններ
շատ եղած տեղուանքը փոթորիկ խիստ
քիչ կը պատահի . թէպէտ և ուրիշնե-
րը կ'ըսեն որ նոյն տեղերուն քովերը
ան պատճառաւ փոթորիկները աւելի
շատ ու սաստիկ կ'ըլլան :

Եւելի մեծ պարծանք է Ս. Ն. Բ. ի
մէկ ուրիշ յաղթանակը որ ըրաւ Պոլո-
նիայի մէջ . Եւրոպայի անունով գիտուն
մարդուն տունը դիպուածով կերակուրի
համար քանի մը մեռած գորտ պատ-
րաստուած ըլլալով , երբոր անոնց դը-
րուած տախտակին քովի ելեքտրական
մեքենան դարձուցին՝ տեսան որ գորտե-

րը սկսան շարժիլ ու ցատքերտել : Եւ
բանիս վրայ Եւրոպայի զարմացած՝ նո-
րէն նորէն փորձեց , ու սկսաւ ըսել թէ
անշուշտ կենդանեաց ջղերուն մէջ ելեք-
տրական հեղանիւթ մը կայ , ան է զա-
նոնք շարժողը : Եւ ատ փիլիսոփաներ
հետեւեցան աս սխալ կարծիքին , և յոյս
առին թէ գուցէ մեռած կենդանիներ
ընդ ալ կարենան ելեքտրականութիւն
շարժմունք տալ : Եւայց Ս. Ն. Բ. ի յղթան աղէկ
ճանչնալով բնութեան հաստատուն օ-
րէնքները , ժպտեցաւ աս բանիս վրայ .
շատ փորձեր ըրաւ ու հաստատեց թէ
կենդանեաց միանունքը ելեքտրակա-
նութեան հաղորդիչ թելին չափ միայն
ուժ ունին , և կենդանական ելեքտրա-
կանութիւն ըսուածը սուտ բան է : Եւ
ատեն տաք վէճ մը ելաւ երևելի բնա-
գէտներու մէջ . մէկ կողմանէ կուռոյ-
ներն էին Հումպոլթ , Ս. Բ. ի ասայլի ու
բոլոր Պոլոնիայիք , մէկալ կողմանէ
միայն Ս. Ն. Բ. ի գիտութիւնը . ինք
տարի քշելէն ետքը՝ յաղթանակը Ս. Ն.
Բ. ի ըրաւ :

Եւել Ս. Ն. Բ. ի յղթային անունը անմահացը-
նող գիւտը իրեն « Եւրոպայ » է . Եւրոպայ
կ'ըսէ թէ Ս. Ն. Բ. ի յղթային սիւնակը մարդ-
կային գիւտերուն մէջ ամենէն զարմա-
նալին է , ինչուան նաեւ դիտակէն ու
շոգեշարժ մեքենաներէն ալ : — Եւ գոր-
ծիքը սիւնի ձեւով բան մըն է , պղնձէ ,
զինկէ ու թըլած չուխայէ կըր կըր
թիթեղներ իրարու վրայ շարած աս
կարգով . պղնձ , զինկ , չուխայ : Եւ
որ պղնձն ու զինկը յիսունական հատ
ըլլան վրայէ վրայ՝ շատ զարմանալի ե-
րևոյթներ կը տեսնուին . Եւրոպային
վերի ու վարի ծայրերը թէ որ մետաղէ
թել մը կպցնեն , ու մի և նոյն ատե-
նը երկու թելին ալ դպչիս , անանկ ե-
լեքտրական ցնցում մը կը զգաս որ կար-
ծես թէ Եւրոպայի մեծ անօթի մը դը-
պար : Եւ Ս. Ն. Բ. ի յղթայի սիւնակին ուժովը
ամենակարծր մետաղներն ալ ոչ միայն
կը հալին , այլ նաեւ գոլորշի կը դառ-
նան . ածուխը կրակի պէս կը վառի ա-

ունց իր ծանրութիւնն ու գոյացութիւնը կորսնցնելու, մագնիսական ձգողութեան տակ ընկնող մետաղները մագնիսութիւն կ'առնեն ու մագնիսական լոյս կը հանեն. մաքուր ջուրը կը լուծուի, և այլն: Եւ գիւտով այնչափ մեծցաւ Ս յղթային անուան որ Ստլանտեան ուկրաինայի թափող գետերէն մէկուն անունը Ս յղթա գրին, և ինքը ամէն մեծամեծաց սիրելի եղաւ: Սոնափաթէն անանկ մեծ համարումուներ աս երեւելի մարդուն վրայ, որ սիւնակին գիւտը լսելով՝ մրցանակ մը խոստացաւ 60,000 Ֆրանքի ան մարդուն որ ելքտրական ու մագնիսական ուսմունքը Ֆրանքլինին ու Ս յղթային չափ առաջ տանի. վերջը ասպետութեան պատիւ տուաւ Ս յղթային, ու Ստալայի թագաւորութեան կոմս ու խորհրդական անուանեց:

Հասակաւ բարձր ու գեղեցիկ էր Ս յղթա. միտքը սուր ու բարակ, քաղցրաբարոյ, բարեպաշտ ու սրտոտ: Հարստութեան ու գովասանքներու մէջ խոնարհ եղաւ. և ազատութեան, խռովութեանց ու շողջորթութեան գարուն մէջ անարատ: Ըստ Ճամբորդութիւններ ըրաւ Ստալիա, Վերմանիա, Ղազդիա ու Նիգդիա, և ամէն տեղ մեծ պատիւ գտաւ: Եւորէն Ստալիա դառնալով, Սոմարտիայի մէջ գետնախնձորի մշակութիւնը ինքը խոթեց, որով աղքատաց շատ օգտակար բան ըրաւ:

1827ին մարտի 5^Է Ս յղթային վերջի օրը եղաւ Վրոմոյ քաղքին մէջ. ուր մեծամեծները փառաւոր թաղումը իրեն, ու ետքը շատ յիշատակներ կանգնեցին. ասոնց մէջ ամենէն փառաւորը Վրոմոյի մէջի արձանն է Վարրալայի ազնիւ մարմարիոնէ՝ 6 կանգուն բարձր, որ 1834ին սկսաւ փորուիլ, ու չորս տարիէն ետքը լմնցաւ:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Չինաց Գարնան Դարձին Կահէսը:

ՎԱՐՆԱՆ սկիզբը կը ժողովուին քառասուն ծեր երկրագործք ինքնակալին օգնելու համար գարնան հանդէսը բանալու, և պատրաստելու հինգ տեսակ սերմանելու հունտերը, որ են ցորեն, բրինձ, բակլայ, և մեծ ու պզտիկ կորեակ:

Ինքնակալը հանդիսի հագուստով կ'երթայ իր պալատականներովը որոշուած տեղը (ըստ Չինաց Վէնո) որ արտավարի չափ տեղ է, գարնան զոհ մը ընելու Ստուծոյ, որ ընդունին երկնքէն առատութիւն և բերքերուն պահպանութիւն: Օոհէն վերջը կ'ինջնայ իր իշխաններովը և դատաստանարանին ինք ոստիկաններովը. իշխաններէն շատը կը բերեն տուփեր որոնց մէջ դրած են ցանելու սերմերը: Երբոր ամէնքը մտադրութեամբ լուռ կը կենան, ինքնակալը կ'առնէ արօրը և քանի մը աւօս կը բանայ. իշխանները և ինք ոստիկանները կարգաւ կ'ընեն նոյն գործողութիւնը ինքնակալէն վերջը, որ կը ցանէ հինգ տեսակ հունտերէն. քառասուն երկրագործներ ալ կը լմնցնեն հերկելը և ցանելը բոլոր այն արտավարը:

Բայց շատ մեծ հանդիսով կը կատարեն Չինացիք այս երկրագործական տօնը. բոլոր արքունեաց մանտարիները, ծիսարարները, և դատաստանի ուրիշ պաշտօնեաները, օրը լուսնալուսն պէս պալատէն կ'ելլեն զոհին ներկայ գտուելու: Օոհէն ետեւ տասը հոգի առաջին կարգի՝ սպաներէն՝ պահպանութեան համար ինքնակալին չորս դին կը կենան. որ կը հանէ հանդիսի զգեստները, ասանկ ալ իշխանները և մեծամեծները որ պիտի ցանեն: Երարողապետը, մեծ նախարարները և մէկալ պաշտօնեաները կը ժողովուին արտավարին մէջտեղը. չորս պատուաւոր ծերեր, տասնչորս երգիչներ, երեսունըվեց երաժիշտներ, քսան գեղացիներ յարգեայ գլխարկ-